№ 7 ՄԱՐՏ 1894

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՍՈՎ ԵՒ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մարտ, 1894 թ.

Սո՞վ է Հայաստանում, հայ ժողովուրդը հարիւրաւոր ընտանիքներով է գաղթում, և այդ սովն ու գաղթականութիւնն ահա երկրորդ տարին է, որ սկսվել է և շարունակվում է այսօր աւելի ուժեղ կերպով, աւելի կատաղի ձևով: Սովից գաղթում, մեռնում են մարդիկ այն երկրում, ուր ոչ երաշտ է եղել, ոչ մորեխ է երևացել և ոչ միորևէ բնական պատուհաս. սովից գաղթում, մեռնում են այն երկրում, որ յայտնի է իր առատութեամբ, իր բերրութեամբ, ճոխ և հարուստ բնութեամբ, ուր ապրում է աշխատասէր, չարքաշ ժողովուրդ. սովից մեռնում են այն երկում, ուր դեռ ոտ չէ դրել կապիտալը, ուր չը կայ պրոլէտարիա, վարձկան բանուոր, ուր բնակիչների մեծամասնութիւնը հողագործ, անասնապահ և արհեստաւոր է, ուր չկայ զեղխ ու փարթամ կեանք, ուր չկայ ախտ և համաճարակ հիւանդութիւններ, ուր չի եղել և չկայ ցորենի արտահանութիւն, — երկրի հարստութեան մեծ մասը, եթէ ոչ ամբողջը մնում է իր մէջ: Չկայ և ոչ մէկը այս պատճառներից, բայց և այնպէս մարդիկ գաղթում են, մեռնում են սովից. և այս ասողը, յայտարարողը ոչ միայն յեղափոխական թերթերն են, այլ և օրինական, նոյն իսկ տաճկական թերթերը, անմեղ մարդիկ, և մինչև իսկ ինքը Սուլթանի կառավարութիւնը: Սովը և գաղթականութիւնը փաստ է, իրողութիւն է. նա յեղափոխականների, "չարամիտների" երևակայութեան ծընունդ չէ և ոչ էլ նրանց հնարած շինծու լուրը:

Բայց ի՞նչն է դորա պատճառը:

Դորա բուն պատճառը ներկայ ռէժիմն է և երկրի տնտեսական պայմանները, որոնց հովանաւորում է այդ ռէժիմը, որովհետև մէկը միւսի գոյութիւնը պայմանաւորում է: Ներկայ ռէժիմը իր բոլոր ֆակտորներով ծանրացել, նստել է աշխատաւոր, արդիւնաբերող դասի վզին և առանց խտրութեան միջոցների, առասպելականութեան հասցրած ձևերով կեղեքում, հարստահարում է նրան: Ծանր, միանգամայն անտանելի; հետզհետէ աճեցող հարկերը. վաշխառուների, կապալառուների, աղաների, հարկահաններ՝ այդ ահագին լեգէօնի էկսպլուատացիան, կեղեքումները մի կողմից, իսկ միւս կողմից պաշտօնեաների՝ սկսած ամենաբարձրից մինչև ամենաստորինը, փաշայից սկսած մինչև ամենայետին զափտիայի բռնազբօսիկ ու վայրենի զեղծումները, տուգանքները. քիւրդ աւազակների թալանն ու յափշտակութիւնը, տուն, տեղ, արտ, կալ աւար ու հրդեհի ենթարկելը. և վերջապէս ինքը, ճոխ և փարթամ, մարդկային արիւնով ներկած Իլդիզի պալատի գահակալ Սուլթան Համիդը, այս բոլոր արիւնարբուների խմբապետը, շրջապատված իր նմաններով, որոնց կեանքի միակ նպատակն է հարեմը և զուարճութիւնը- անասնական կեանքը, որոնք իրենց գոյութիւնը պահում, պահպանում են հազարաւոր զոհերի արիւնը ծծելով, հազարաւոր մարդկանց աշխատանքով, դառն քրտինքով և որոնք դեռ չեն յագեցել . . . ահա թէ որտեղ պէտք է որոնել սովի և գաղթականութեան բուն արմատները:

Դրանք բոլորը զրկել են աշխատաւոր դասին արդիւնաբերական միջոցներից և աշխատաւոր ոյժերից: Սրանց մի մասը Պոլսի և Կովկասի քաղաքների փողոցներումն են ընկած իրենց և ընտանիքի թշուառ գոյութիւնը պահպանելու համար մի քանի փարա վաստակելու, որը դարձեալ խլում, յափշտակում են, իսկ միւս մասը բանտերում են ենթարկված անասելի և աներևակայելի տանջանքների, որոնց մի քանի թոյլ նմուշներն արդէն հրատարակել ենք: Չկայ աշխատանքի ապահովութիւն,- նա կեղեքվում, խլվում է. չկայ անձի և պատուի ապահովութիւն,- տանջում, չարչարում, ծեծում են. ամեն րոպէ աշխատաւորը ենթարկված է վտանգի, ամեն րոպէ նրան մահ է սպառնում. վտանգի և անպատուութեան է ենթարկված և նրա ընտանիքը- լլկում, ոտքի տակ են տալիս նրա ընտանեկան պատիւը, պղծում նրա օջախը:

Աշխատանքի անապահովութեան պատճառով գիւղացին այս տարի ցանքս չի արել շատ տեղ. նա որ առաջ բահրա տալիս էր 10-ից մի մաս, այս տարի ստիպված է վճարել 4-ից, 5-ից մի մաս (տես թղթ. Աշաշկերտից):

Գիւղացու աշխատանքը դրված է ամբողջապէս կապալառուների տրամադրութեան տակ, որոնք աճուրդով գընում են կառավարութիւնից բերքերի տասանորդը. նրանք են արտերի երեսը հաւաքողը. իսկ լինել կապալառուների տրամադրութեան տակ, ասել է՝ ամբողջովին զրկվել արդիւնքից։

Ահա սովի և գաղթականութեան ընդհանուր և գլխաւոր պատճառները, որոնք տարիներից ի վեր գոյութիւն ունեն և ամենայն եռանդով ու սիստեմատիկաբար գործ են դնվում և որոնք դեռ հեռու են ամբողջը լինելուց։ Եւ այսպիսի պայմանները ի՞նչպէս կարող են չառաջացնել գաղթականութիւն և սով. իսկ ուր գաղթականութիւն, աշխատանքի, արդիւնաբերութեան դադարումն, այնտեղ և սով. ուր սով, այնտեղ և գաղթականութիւն, մէկը միւսի վրա փոխադարձաբար ազդում է։

Դեռ այս բոլորը բաւական չէ. այժմ Սուլթանի կառավարութիւնը սովը շինել է իբրև զէնք, իբրև միջոց յեղափոխութեան առաջն առնելու։ Նա անկարող լինելով բանտերով, կախաղաններով, ինկվիզիցիայով մեռցընել յեղափոխական ոգին ու միտքը, որի արտայայտիչը և ներկայացուցիչն այդ երկրում հայ ժողովուրդն է, որին ստիպել, յեղափոխութեան գիրկն է ձգել իր դրութիւնը, իր տնտեսական և քաղաքական կեանքը։ Նա ընտրել է վերջին միջոցը, որը ամենավտանգաւորը և սարսափեցուցիչն է, որովհետև նա ծանրանում է ոչ թէ անհատների, խմբերի վրա, այլ ամբողջութեան։ Այո, Սուլթանի կառավարութիւնը սովը այժմ քաղաքական զէնք է շինել իր նպատակին հասնելու, այդ վնասակար տարրից ազատվելու։ Նա կապալառուների, վաշխառուների, հարկահանների միջոցով երկրի ցորենը հաւաքել է իր և վերջինների ամբարները, խլել է նոյն իսկ գիւղացու սերմնացուն և այդպիսով ցորենի մի չափը 1ր. 90կ. ից հասցրել են 7ր., իսկ սամարինը 2ր.-ից հասցրել են 20ր. Էլ ի՞նչ անի խեղճ գիւղացին, էլ ի՞նչ անի խեղճ աշխատաւորը, ի՞նչպէս և ինչո՞վ կարող է իր գոյութիւնը պահպանել։—Ոչնչով, և նրան մնում է միայն մի միջոց՝ գաղթել, գնալ այն տեղերը, ուր ոյժ ունի համեմատաբար տանելի կերպով ապրել. և հայ ժողովուրդը գաղթում է, փախչում իր հայրենիքից։

Կառավարութիւնն էլ հենց այդ է ուզում, ուստի և ոչ մի արգելք չէ դնում. նա հրճվում, բերկրում է, յուսալով, որ սովի և գաղթականութեան միջոցով կազատվի այդ տարրից, որ երկրի յեղափոխական շարժման ուժեղ արտայայտիչն է։

Բայց նա չարաչար սխալվում է իր հաշիւների մէջ. նա չէ կարող զրկել երկիրը իր ամբողջ բնակութիւնից, միայն իր տղայական տակտիկայով անգիտակցաբար ծառայութիւն է անում յեղափոխականներին, նպաստում է յեղափոխական պրոպագանդային, շարժմանը և ոգուն աւելի մեծ շրջան առնելու, աւելի արագութեամբ տարածվելու ժողովրդի խաւերի մէջ։ Մենք խոստովանվում ենք, որ լաւ յեղափոխական պրոպագանդիստը ինքը կառավարութիւնն է իր տղայական տակտիկայով, իր բռնած դիրքով, որովհետև նա բազմապատկում է ժողովրդի դժգոհութիւնը, բոլորովին անտանելի է դարձնում նրա դրութիւնը, որով և դընում է նրա սրտում "լինել, թէ չլինել" ճակատագրական հարցը։ Իսկ այդ դատավճիռը յոգուտ կառավարութեան չի լինիլ. նա ապրել է ուզում, իսկ ապրել այս պայմաններում անհնարին է, հետևապէս հարկաւոր է ազատվել դրանից. ազատվելու համար պէտք է ոչնչացնել այդ պայմանները, իսկ այդ կարելի է,— այժմ համոզված է ժողովուրդը,— միայն յեղափոխութիւնով։

Ուրեմն յեղափոխութիւնն է միակ միջոցը ջարդելու ներկայ բէժիմը, ազատվելու նրա խեղդող, մեռցնող ճիրաններից. յեղափոխութիւնն է միակ միջոցը ստեղծելու այնպիսի պայմաններ, որ այդ երկրում մարդը, ժողովուրդները կարող են ապահով կերպով ապրիլ. յեղափոխութիւնն է միակ միջոցը աշխատանքի և անձի ապահովութիւն ձեռք բերելու։ Նա դարձել է անխուսափելի, անպայման պահանջ, և ժողովուրդն այդ կանի։ Նա կը փշրէ բռնաւորի շղթաները, թափ կը տայ իրենից ստրկական լուծը, կազատվի իր պարազիտներից, որովհետև նա ապրել է ուզում, ապրել՝ իբրև մարդ, իբրև ազատ քաղաքացի։

ՆԱՄԱԿ ՎԱՆԻՑ

Տաճկական կառավարութիւնը, որի գլուխն այսօր կանգնած է Սուլթան Համիտը, հարստահարողներից, քարոզքանդ անողներից ամենամեծը, ձգտում է մահ տարածել ամբողջ Հայաստանում։

Սուլթանի կառավարութեան փթած, հոտած բէժիմը յենուած է մի քանի փակտորների վրայ, որոնք են. փաշա-նախարարների կազմակերպութիւնը, զինուորական, ոստիկանութեան, հարկահանութեան, դատարանի, մաքսային, գաղտնի գործակալների կազմակերպութիւնները և այլն, և այլն։ Այս փակտորները թոյլ, խարխուլ դրութեան մէջ են և պահպանվում են արհեստական կերպով մասամբ ևս այն "պրոպագանդայով", որ անում է թիւրիմացաց ժողովրդի մի մասը, մոլեռանդութիւնից դրդուած։

Յիշուած փակտորները կազմում են մի շղթայ, որի առաջին և մեծ օղակը Համիտի ձեռքն է, շրջապատված իր նախարարներով։

Առաջին օղակից արձակվում է ամեն արիւնով գրված հրաման, հրահանգ ու ծրագիրներ, որոնք ճիւղաւորվելով մտնում են ամեն մի փակտոր և գործադրվում։ Հայ ժ

զափոխական մարմինները միշտ աշխատում են մոտիկից պարզաբանել այդ փակտորների բռնած ընթացքը, գործ դրած մաշող, անարդար, ամարդի բռնութիւնները: Այժմ, յեղափոխութեան նոր սկսված գործնական շրջանում, մեծ դեր է խաղում տաճկական դատարանը: Սա բոլորովին այն չէ, ինչ որ էր 4-5 տարի առաջ. սա այժմ ոչ թէ առաջվայ պէս միայն անարդարութիւն, կաշառակերութիւն է գործ դնում, այլ աւելի իրաւացի և արդար է դրանց անուանել արիւնարբուների, ինկվիզիտորների մի ժողովածու: Այդ կազմակերպութեան տրամադրութեան տակն է դրված բանդը, ոստիկանութիւնը: Նայելով թէ ինչ է բղխում մեծ օղակից, նայելով թէ ինչ կամայական ընթացք պէտք է տալ դատին, ըստ այնմ էլ բանտում տեղի են ունենում անլսելի և չտեսնված, հակամարդկային տանջանքներ: Բանդարկեալներին չեղած, չկատարված բանը խոստովանեցնելու, ճշմարտութիւնը բոլորովին յեղաշրջելու կամ նոյն իսկ բանդարկեալն իրան մարդասպան, յեղափոխական ճանաչվելու համար երբ ընդդիմութիւն է ցոյց տալիս, մէկ-մէկ պոկում են նրա պեխերի, գլխի մազերը, մեծ ասեղով ծակծակում են նրա պարանոցը, չթողնելով քնելու անընդհատ 40-45 ժամ, շիկացրած երկաթով "դամղա" են զարկում նրա կողերին, թրջում են նրա առանձնարանի յատակը ձմեռ ժամանակ, չեն տաքացնում այդ գարշելի խցիկը և օրերով քաղցած պահում, գիշերները սաստիկ ծեծելով: Շատ անգամ յանդուգն երիտասարդների մէջքից մինչև վիզը փաթաթում են 4-9 փթանոց ահագին շղթան, որի մի ծայրը քարշ է գալիս յատակի վրայ և շառաչում կամարների տակ: Բանդարկեալի կողերն ու վիզը ուռչում է, խոր վէրքեր բացվում և եթէ նա գիշերային գաղտնի քննութեանց ժամանակ չի խոստովանում չեղած յանցանքներ, չի մատնում անմեղներին, տալիս են այդ ազատութեան զոհին յետին հարւածը ու մի քանի օրից յետոյ ոստիկանութիւնը հրաւիրում է հայ քահանային դուրս հանել "խրիստիանի" դիակը:

Ահա այս լիրբ փակտորի, դատարանի, ինչպէս վերևում յիշեցի, մօտերս կատարած մի դատը առիթ է տալիս մեզ խօսելու:

Ցիշենք այդ արիւնարբուների կատարած դատը:

Դատարանի վերաքննիչ (իստինաֆ) ատեանը հրաւիրում է դատի հետևեալ բանդարկեալներին. Մաքսապետեան Մկրտիչ էֆ., որն իբրև հաւատարիմ ծառայող, Մէճիտիէի 4-դ կարգի շքանշան ստացած է, Աւերակ գիւղի քահանան, Սաթմանց գիւղի ռէս Կարապետը, Աւերակ գիւղի հիւս Գէորգը, Սարգսեան Սահակ էֆ., Բօշեան Աւետիս՝ դատարանի նախկին անդամ, Կանդջեան Ցակոբ, Բօղազքէսեան գիւղացի Աւագը, Աւերակցի քահանայի եղբայր ռէս Եղիազարը, Սեդրակ անուն երիտասարդը, Մելքին Զթչի-Գարօյեանը, Տէր-Ցարութիւնեան Տիգրան՝ Հասպստան գիւղից, Սաֆօ գիւղացին և իւր ընկերը: Բացի սրանցից բացակայ կերպով դատի ենթարկուեցան կառավարութեան ձեռքէն խոյս տվածները. Զորթանեան Միսաք, Կանափմանողեան Պետրոս, Զարէհեան և Թեոդիկեան: Սրանք մէկ ամսից սկսած մինչև մի տարի բանդարկված էին առանց քննութեան:

Քննվողները դատախազի կողմից մեղադրվում են երկու կէտում: ա) բանդարկեալները մի կազմակերպված կոմիտէի ձեռքով փորձ են արել վալիին տերրորի ենթարկել, որի գործադրութիւնը յանձնված է Աւերակ գիւղացի հիւս Գէորգին. բ) նոյն կոմիտէն իւր գործակատարներով յարաբերութիւններ է հաստատել զանազան տեղերի հետ, մարդիկ է պահել, հաց տուել, կէնք փոխադրել և այլն: Նախապէս պէտք է յայտնել, որ հիւս Գէորգը առաջինը ձերբակալվելով՝ հիմքն է կազմում այս դատի և մի շարք տանջանքների ազդեցութեան տակ մատնել է հենց այդ դատվող մարդոց այն առաջուց կազմած ծրագրի համեմատ, որն որ նախապատրաստված էր ոստիկանութեան և դատախազի կողմից, վալիի տրամադրութեան ներքոյ: Ահա թէ այդ կեղծ, սարքովի դատն ինչպէս է հիմք առնում: Աւերակցի հիւս Գէորգը մի օր գալիս է Վան և Հայկավանք կոչված թաղում քանի որ կուզես հարբում է: Զմոռնամ ասել, որ այդ անպիտանը պատահմամբ յեղափոխականների և նրանց գործերի մասին հատ ու կտոր տեղեկութիւններ է ունենում: Սաստիկ հարբած դրութեան մէջ լսում է, թէ վալին շուտով քաղաքից տուն պիտի վերադառնայ:

Դրանց գիւղում նոր եկեղեցի են շինում և օծման պատրաստութիւններ տեսնում. Գէորգի խելքին փչում է օծման առթով (հարբած մարդ) վալիին ներկայանալ: Շտապով դուրս է գալիս գինետնից, ձին հեծնում և Բահրի փաշայի տուն դառնալու ժամանակ հետևում նրան. երբեմն սրարշաւ անցնում է նրա գնացքից, առաջ-յետ ձի խաղացնում, նորից սրարշաւ ճղում, անցնում է վալիի սվիտան: Բահրի փաշան զարմացած՝ կանգնեցնել է տալիս նրան Խաչ-փողան կոչված փողոցում, մի լաւ ծեծել է տալիս և իսկոյն հրամայում խուզարկել: Գէորգի վրայ գտնվում է մի բեվոլվեր առանց փամփուշտի. այդ օրից նա բանդարկվում է, որ տևում է շատ ամիսներ և հենց այդ օրից էլ զօրով ծագեցնում են վալիին տերրորի ենթարկելու խնդիրը: Այնուհետ տանջանքների տակ թուրքերը լեզու են դնում Գէորգի բերանը և իրանց ուզած մարդկանց մատնել տալիս, որից ամիսների ընթացքում հետզհետէ կազմվում է այս կեղծ դատը: Եթէ հիւս Գէորգին սպառնալիքներ չհասնէր և միջոցներ գործ չդրվէր մի քանի տասնեակ երիտասարդներ էլ պիտի վառվէին:

Առաջին քննութիւնը, որ կէս օրից տևեց մինչև աւելի մայր մտնելը, անյաջող անցաւ. դատաւորները որոշ եզրակացութեան չհասան: Անգութ դատաւորները գթում են և ոմանք դէմ են լինում այդպիսի շինծու, լիրբ միջոցով մահուան վճիռ ստորագրել: Իսկ վալին ոտը դրել և պնդում էր միահամուռ մահուան վճիռ տալ: Մուքթը կոխել էր, երբ բանդարկեալներին մէկ-մէկ դուրս բերին դատարանից. իրաքանչիւրին շրջապատում էին 2 զաֆտիա, թաւերից ամուր բռնած, իսկ բոլոր խումբը պահպանների մի օղակով պատած՝ առաջնորդվում էր դէպի բանդ:

Միւս առաւօտ վալին իր մօտ կանչեց 5 դատաւորներին, որոնցից երկուսը հայ են (սահմանադրութեան փըշրանքներ, որոնք անունով միայն դատաւորներ են. դրանց ձայնը միշտ խեղդվում է) և հետևեալ սպառնալիքը տը-

ւեց. „Եթէ ինձ սպանել ցանկացող դաւադիրներին միայն մահուան վճիռ չտաք, բոլորիդ գլխին նոյն կրակը պիտի թափեմ և ձեզ կամակիցներ համարելով դաւադիրներին, նոյն վճիռը պիտի կերցնեմ"։ Յաջորդ օրը դատը վերսկսվեցաւ և դատաւորներն ամենահասարակ կերպով մահուան վճիռ կայացրին մի քանիսի համար, իսկ ոմանց տարիներով բանտ։ Գուցէ այդ գաղանային վարմունքը մի երկուսի խիղճը տանջեց, բայց ետևից բռնակալ վալիի ճնշում կար...

Աւերակ գիւղացի մատնիչ Գէորգի տված վայրի վերոյ քննութիւնից դուրս եկաւ, որ վալիի սպանութեան և զէնքով փոխադրութեան մէջ ինքը մասնակցել է իբրև կոմիտէի անդամ, իսկ միւս անդամները և գործողներն այն տասնեակ մարդիկն են, որոնք բերված են դատարանի առաջ։ Վերջինիս մօտ իբր թէ կոմիտէի անդամները ի պահեստ դրած են մի նամակ, որի մէջ ամփոփված է դատաւորների վճիռը – վալիին տերբօրի ենթարկելու գործադրութիւնը։ Նամակը շինծու էր. դեռ չգրված, ըստ պիտակ թուղթը խարդախութեամբ, տանջանքների ժամանակ սար-կոմիսերը և դատախազն ստորագրել են տալիս մատնիչ Գէորգին և նոյն գիւղի քահանային, որպէս զի գործին օրինաւորութեան ընթացք տան։ Վալին և կոմիսերը խիստ վախենում էին, թէ Գէորգը կարող է փոշմանիլ դատի ժամանակ. այդ պատճառով ամեն տեսակ սպառնալիքներ, փաղաքշանքներ և հաստատ խոստումներ թափած էին նրա գլխին, որ եթէ այդ թշուառը անդրդեւելի մնայ իր ամբաստանութեանց մէջ, անշուշտ նրան կազատեն և մեծ պարգևներ կը տան։

Գլխաւոր մեղադրվողները, Մաքսապետեան, ռէս Կարապետ և քահանան պաշտպանեցին իրենց դատը, կէտառ կէտ հերքելով, որ իրենք կոմիտէ չեն կազմած, որոշեալ օրերում և ժամերում նրանք երբէք իրար մօտ հաւաքված, տանից բացակայ չեն եղած, որպէս զի վալիի դէմ դաւադրութիւն կազմեն և դորա համար ուներն տասնեակ վկաներ։ Բայց ո՞վ էր անմեղների ձայնը լսողը, քանի որ կեղծ նամակ կար և վալին մի քանի պատրաստված թուղթ վկաներ շպրտած էր հրապարակի վրա։ Միայն ռէս Կարապետը բանտի գիշերային քննութիւնից յետոյ կրկին խոստովանվեց, որ ինքը մի քանի զինված հայ երիտասարդների մի գիշեր հիւր է ընդունած և պատրաստ է դորա պատիժը կրելու։

Վերաքննիչ ատեանը դռնբաց է դատում, այդ պատճառով շատ հայեր ներկայ էին և ամենքն էլ տեսան, թէ դա ոչ թէ քննութիւն, այլ մի խայտառակ, խառնաշփոթ ծիսակատարութիւն է, անմեղներին դատապարտելու համար։ Երկար ու բարակ, անկապ ու անսիստէմ հարցուփորձից յետոյ դատաւորները մի քանի րոպէ առանձնացան և հետևեալ վճիռը դուրս բերին.

Չորս հոգու՝ Աւերակցի Գէորգին, Մաքսապետեանին, քահանային և ռէս Կարապետին "իդամ" ասացին (մահուան վճիռ ասել է, միայն բարեգութ Սուլթանը կարող է փոխել այդ վճիռը 101 տարուայ բանտարկութեան կամ աքսորի), վերջնական կերպով յիշելով նրանց դատապարտութեան մեղադրական փաստերը. — Մաքսապետեան բացի կոմիտէի անդամ լինելուց, նաև իբրև կառավարութեան պաշտօնեայ, օսմանեան պետութեան ներքին գաղտնիքները կոմիտէին և դրսի պետութեանց հաղորդող. ռէս Կարապետին, քահանային և մատնիչ Գէորգին, իբրև կոմիտէի անդամներ, փախըստականներ պահող, հաց տուող, նրանց կամակից և զէնք փոխադրողներին դիւրութիւն տուող։ Մնացած թըզէնք փոխադրողներին դիւրութիւն տուող։ Մնացած թըշուառ ամբաստանեալներին խօմ ոչ մի կանոնաւոր քննութիւն չեղաւ և թիսեցին հետևեալ վճիռները. — 6 տարուայ բանտարկութեան դատապարտվեցան, իբրև կոմիտէի գործակատարներ՝ Սապոնջեան Սահակ էֆէն., Շատուորեան Աւետիս, Կանդօեան Յակոբ (իբր գանձապահ), Բօղազքեասանցի Աւագ։ Քահանայի եղբայր ռէս Եղիազար և Սեդրակ անունով երիտասարդը 5 տարով, Զթչի Գաբօեան 1 տարի։ Փախստականներ՝ – Զորթանեան Միսաք, Բեօզիկեան, Զարէհեան և Կանափմանողեան իրենց բացակայութեամբ դատապարտված են. առաջինը 12 տարով, մնացածները 10 տարով։ Անպարտ արձակված են երեք գիւղացիներ։

Մեր աչքի առաջ կատարված այս իրողութիւնները, փաստերը կրկին և կրկին անգամ ապացուցանում են, որ այս բոլոր չարիքների պատճառը կազմում է թըրքական վարչական կազմակերպութիւնը, փթած ըէժիմը։ Եւ հենց այդ քայքայվող ըէժիմի դէմ գլխաւորապէս պէտք է ուղղեն բոլոր յեղափոխականները իրենց հարուածները։

ՆԱՄԱԿ ԱԼԱՇԿԵՐՏԻՑ

Համիտէյի քրտերի տված անչափ նեղութիւնները և բռնութիւններն Ալաշկերտի հային ստիպեցին գաղթել, որի պատճառով էլ ցանքս չարին։ Նոքա որոնք ցանել էին՝ ոչինչ չստացան, որովհետև հասնելու ժամանակ գիշերով, գաղտնի գալիս էին քիւրտերը քաղում և տանում, կամ տրորում, ծայրերը կտրում մկան պէս, փչացնում թշնամաբար։ Իսկ ով կարողացել է մի կերպ պահպանել, քաղել, խուրձ կապել՝ գալիս գողանում են և, որ սարսափելին է, կրակ դցում, այրում։ Երբ օգնութեան կամ դիմադրութեան փորձ է լինում, խփում սպանում են։

Ուրիշ տարիներ բահրա տալիս էին 10-ից մի մաս, իսկ այս տարի 4-5 ից մի մաս։ Իսկ քիւրդերը ո՞րը զօրով, իսկ այս տարի 4-5 ից մի մաս։ Իսկ քիւրդերը ո՞րը զօրով՝ տանում են իրանց բաժինը և ո՞ր էլ իւր հրացանի ուժով պահնորդների աչքի առջևից տանում է խուրձն այնպէս, որ գիւղացին իր բազմաթիւ չարչարանքից և ահ ու սարսափից ուրիշ ոչինչ չտարաւ իր տունը... Պակասը լրացնելու համար ծախում է նա իւր աշխատանքի ընկեր անասունը, այն էլ շատ չնչին գնով։ Բայց այդ էլ նորան չեն թողնում վայելելու. խփում գըլխին՝ ձեռքիցը խլում կամ գողանում են։

Ուրիշ տարիներ ցորենի սոմարն արժէր 2 ռուբ. իսկ այժմ 20 ռ.։ Փողի պակասութիւնը և հարկերի ծանրութիւնը շատ և շատ է նեղել ժողովրդին։

Յիշենք մեր կողմերը պատահած մի շարք ուրիշ դէպքեր ևս։

Վերջերս Իւչքիլիսէ վանքի գեղի նախիրը տանում են, որ բաղկացած է լինում մօտ 200 կով, եզ և ձիուց։ Գիւղից մարդիկ են գալիս իրանց կենդանիներն ազատելու.

հակառակորդները խփում, Աւետիս Եղջեանին վիրաւորում են ծանր կերպով և նախիրը տանում: Թէև տանողը քրդերին ճանաչել են և ուր հարկն է բողոքել, բայց մինչև այժմս էլ անհետևանք է մնացել:

Ի.Հ-Փիլիսէ վանքի վանահայր և Հին-Բայազէդի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոսի հարսին թուրքացնում են. թուրքացնում են նաև նորա ամուսնուն և ապա կնոջը վերադարձնում:

Համիդիէի քրդերը Եօնջալու գիւղի Գաւրցի Խեչոյի տունը մտնելով՝ ամենասարսափելի տանջանքներով նրան վիրաւորում են,(գուցէ հիմա մեռած լինի) բոլոր ունեցած-չունեցածը տանում են և ապա բռնաբարում կանանց... Նոյն իսկ վիրաւորվածի աչքի առաջ:

Ձերօ գիւղում մտնում են ռէս Փիլոյի տունը, սպանում են նրա Մուշեղ որդուն. 12 տարեկան աղջկանից սկսած մինչև ամենամեծի հետ խայտառակ կերպով վարվելուց յետոյ... Նոյն կերպ են վարվում և արականի հետ 15 տարեկանից սկսած:

Մազրէ գիւղից Եղջի և Վարդանի 20 եզը և 5 կովը օր ցերեկով գողանում են Այիբ փաշայի մարդիկ: Ճանաչելով գողացողներին, բողոքում են զայմաղամին: Նա էլ պահանջում է վկայ. բերում են մի քանի հայ: "Հայի շահադը չի անցնի. դուք, գեավուրներդ, սովոր էք միշտ սուտ գանգատներ տալ", վճռում է զայմաղամը:

Բուրդրան, Խըտր և Ձերօ գիւղերի հայերին Այիբ փաշայի տղաները հետզհետէ հանում և ուղարկում են ուրիշ հայ գիւղեր, իսկ այդ տեղահան եղած գիւղացիներից շատերը գաղթում են Ռուսաստան: Դրանց արտերը, տները դառնում են փաշայի տղերանց սեփականութիւն: Խըտր գիւղում մնացել էր մի հարուստ հայ Մատթէոս անունով, որին թողել էին իր հարստութեան պատճառով, բայց վերջերումս նրան էլ դուրս վռնտեցին, խլելով ձեռքից ամբողջ հարստութիւնը և այնքան ծեծելով, որ մինչև այսօր հիւանդ պառկած է Մազրում: Սահմանակից Մանկասար գիւղի արևելեան ամբողջ արտերը և չայիրները խլել են և այժմ քիւրդերի սեփականութիւն է համարվում: Այիբ փաշան մեզ ծանօթ Զաւոր աղայի տղան է. ռուս-տաճկական պատերազմի ժամանակ անցաւ տաճկաց կողմը և այժմ բնակվում է Ալաշկերտում. ունի 8 որդի: Թէ ինքը և թէ որդիքը մի պատուհաս են հայերի գլխին:

Գաղի գիւղացի Գէորգ Աբրահամեան և Մելքոն Այվազեան իրանց հանդի մէջ չրփի քաղելու ժամանակ Հայդարցի քիւրդերը յարձակվում են նոցա վերայ և թալանելուց յետոյ խանչալով մի քանի տեղից վիրաւորում են և թողնում հեռանում: Թէև քրդերի ով լինելը գիտեն, բայց ի՞նչ օգուտ:

Ռահվլի փաշան այժմ Գարաքլիսում ամենալաւ ճանապարհի վրայ շինել է տալիս իր համար տներ, խանութներ և քարվանսարա, խլելով հայերից մինչև անգամ իրենց բնակված տների տեղերը և կալերը: Վարպետների և բանուորների ամենամեծ մասը հայերն են. թէ սայլերը, թէ մարդիկը զանազան գիւղերից օգամ է հանել: Հայերին մինչև այժմ ոչ մի կոպեկ չի տվել:

(Կը շարունակվի)

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՍՈՎԸ

Այս րոպէիս Վանի վիլայէթում վերջին ծայր նեղութիւն է քաշում հայ ժողովուրդը: Մենք ամեն օր լուրեր ենք առնում, Մշի պտղաբեր դաշտում, Բիթլիզում, Էրզրումի մէջ և Ալաշկերտում տարածված է սովը և թէ կառավարութիւնն ամեն կերպ աշխատում է այդ աղէտը ծածկել, մինչդեռ այստեղ նոյն այդ կառավարութիւնը ձգտում է արհեստական սով առաջացնել: Հետևեալ փաստերն այս խաղը կը պարզեն:

1892 թուին Էրզրումի վիլայէթի մէջ հացի թանկութիւն էր:

1893-ի գարնանը կառավարութիւնը Վանի հացը, գլխաւորապէս Արճէշ գաւառի (Վանայ վիլայէթի շտեմարանն է) քաշեց տարաւ Էրզրում և Երզնկա աւելին, քան հարկաւոր էր. գիշերով ծածուկ լցնում էր Վանայ ծովակի նաւակները և տեղափոխում: Այս գաղտնագողի վարմունքը ժողովրդի սրտում կասկած ձգեց, ժողովրդի, որ կատարելապէս անհաւատ է դարձել դէպի կառավարութիւնը: Հենց մի ամսից յետոյ պիտի ծախուէր արտերի երեսը: "Բան մը կայ հոս, խաղ մը կայ..." մրթմրթում էր ժողովուրդը: Ոստիկանութիւնը սկսեց բադեր բաց թողնել. "Վիլայէթի բոլոր գաւառներում հացի բերքը վատ է, այս տարի հացը շատ կը սղի:" Իսկ լիրը կապալառուները խամ բացարձակ քարոզում, ամրացնում էին կասկածները:

Արտերի երես ծախելու օրերն եկան. փոքր կապալառուները հեռացան, ասպարէզը մնաց մեծամեծներին: Հայ ժողովրդի ցեցերը գաւառներից վերադարձան, ըսկըսվեց աճուրդը և ի՞նչ էք կարծում՝. այն գիւղը, որ 92թ. ծախված էր դիցուք 100 ոսկով, այժմ տրվեցաւ 150 ոսկու, այնպէս որ, եթէ կառավարութիւնը անցեալ տարի ամբողջ Վասպուրականի երեսը ծախել է կապալառուներին 100 հազարի, այս տարի ծախեց 150 հազարի: Բաշիբուզուկ կառավարութիւնը իր նպատակին հասաւ, արտերը թանգ ծախեց:

Կալերի ժամանակը հասնում է, վաշխառու դասակարգը իր ճուտերով-մամուռներով ու զաֆտիաներով տարածվված է ամեն տեղ և հաւաքում է տասանորդը, որը իսկապէս ութ և կէսից մէկ է. սակայն այնպիսի միջոցների են դիմում այդ հաւաքողները, որ 7-ից մէկ է դուրս գալիս գիւղացու ձեռքից. թող այդ՝ մնացածով էլ պիտի կերակրվի և քիւրդը հայի հետ: Ահա այստեղ է ներկայանում ամենաանողորմ տեսարանը. ուտում, թափում, տրորում է զաֆտիան. գողանում, խաբում է վաշխառուն, քէֆն ուզածի պէս բաժին է վերցնում փօլիսը, հապա ո՞ւր թողնենք ընտանիքի պատիւը:

Հաւաքված տասանորդը ամեն տարուայ նման պիտի դուրս գար հրապարակ, որ չունեցողները գնէին. բայց այդպէս չեղաւ, ահագին քանակութեամբ հացը ամբարած մնացել է Հասան փաշայի, դաւաճան Թարզիբաշեանի, Մահմուդ աղայի, Մարութեանի, Հաջի Բաբրի և այսպիսի երկու տասնեակ հարստահարիչների ձեռքին: Ուրեմն հացը 100000 փթերով կառավարութեան տրամադրութեան տակն է և ահա նա սկսում է ամենա-

անողորմ խաղը: Գիւղացին գալիս է, քաղաքացին դիմում է հրապարակ հաց գնելու, ցորեն չկայ. փոխանակ ամեն տարուայ նման հարիւրաւոր ցորենի կոյտերի, այժմ մի քանի տոպրակներ են:

Սովի երկիւղը կայծակի արագութեամբ տարածվում է ամբողջ Վասպուրականում: Ցորենի չափը (մօտ 3 պուդ) 1 ր. 90 կ.-ից թռաւ 3 ր. 50-ի և կանգնեց 7 ր. վրայ: Հացթուխների խանութի առաջ ամբոխն իրար է ջարդում մի ֆունտ հացի համար. գլուխ, քիթ ու բերան արիւնաղախ լինում, իսկ այնտեղ, մի քանի քայլ հեռու Հասան փաշի, քաղաքապետի ահագին ամբարները տնքում են հարիւր-հազարաւոր փթերի ծանրութեան տակ: Գիւղացին սովի ահից ծախում է եզն ու ոչխարը, վազում քաղաք. առևտրականը դուրս է բերում իր փոքրիկ դրամագլուխը. արհեստաւորը, չունևորը ծախում են իրենց տան կարասին և շտապում դէպի ցորենի հրապարակ. հազարուն մի լիրը վիրաւորանքներ կրելով ոստիկան զաֆտիանեերից, հազիւ կարողանում են մի-մի չափ ալիւր ձեռք ձգել առասպելական գներով:

Արհեստաւորը, մանր վաճառականը գիւղում կամ մի կտոր արտ ունի, կամ կիսովի, դրամով ցանքս արած. ամեն տարի նա բերում է տուն 10-30- կամ 50 պուդ ցորեն: Ճնշումը կատարեալ պիտի լինի: Իսկոյն ոստիկանութիւնը մի կարգադրութիւն թխեց. "Դրսից քաղաք մտած հացը ոչ ոք իրաւունք չունի տուն տանելու առանց ոստիկանութեան տոմսակի": Զուր է աշխատում խեղճ քաղաքացին իր մի քանի իշաբեռ ցորենը խուլ, յետ ընկած փողոցներով փախցնել. ո՞ւր կարող է փախչիլ հարստահարվողը: Հարիւրաւոր ժանդարմներ, լրտեսներ և կոլլիներ հորսի շների նման ամեն տեղ բռնած են: Կտրում են հայի առաջը, ծեծելով, թքելով, նրա ազգային պատիւը վիրաւորելով քաշ են տալիս ոստիկանատուն, ցորենը թափում հրապարակ, մի քանի փութ միայն տալով խեղճին: Դեռ այս բաւական չէ, կառավարութիւնն սկսեց հայերի տները խուզարկել, պահած հացը դուրս բերելու: Ալին կրկին և կրկին հրաման արձակեց, թէ ով ցորեն ունի, 1, 2 ամսուայ պաշար վերցնէ, միւսը հրապարակ հանէ, ժողովուրդը կոտորվում է: Բայց միևնոյն ժամանակ կապալառուներն ազատ-համարձակ հազարաւոր սայլեր ու ձիաբեռներ դատարկում են իրանց ամբարները:

Սա ի՞նչ բան է. մի՞թէ սա Սուլթան Համիդի սարքած խաղը չէ, մի՞թէ սա այն որոգայթը չէ, որով Համիդի կառավարութիւնը ձգտում է արհեստական սով առաջացնել, քայքայել ժողովրդին տնտեսականապէս:

Հետաքրքիր էր թուրք տարրի վայելած առանձնաշնորհումները. նրանց տները չէր խուզարկվում, նրանց ոչ ոք ձեռք չէր տալիս դրսից ցորեն բերելիս և, որ գլխաւորն է, հայերի ձեռքից խլած կամ տնից հանած ցորենները ոստիկանութիւնը շատ էժան գնով բաժանում էր թուրքերին: Զնայելով այս բոլորին, թուրք ժողովուրդն էլ սկսեց գրգռվիլ նայելով հսկայ ամբարներին:

Նոյն իսկ շատերի գլխում պտտվում էր ամբարների վրայ յարձակվելու միտքը: Սակայն թուրք կառավարութիւնը շան հոտառութիւն ունի, իսկոյն նախազգուշացաւ. միայն հայ և թուրք կանայք խուռն բազմութեամբ բողոքեցին վալիին, գնալով նրա պալատը, անիծելով նրա եկած ճանապարհը և ուղարկողին: Վալին հրամայեց վաշխառուներին ամեն օր մի քանի փութ ցորեն թափել հրապարակ յուզումը դադարեցնելու համար: Ամենքը համոզված են, որ այս բոպէիս քաղաքի մէջ այնքան հաց կայ, որ կը կերակրէ ամբողջ Վասպուրականի չունևորներին մի տարի և կիսից աւելի:

Սուլթանի խաղը Բահրի փաշայի բանին եկաւ. նա մի քանի հազար լիրաներ կարող է ծալել:

Վէհափառ Համիդ, թալանիր, կողոպտիր միլիոնաւոր ժողովուրդը, առաջացրու արհեստական սովեր. իբրև ամենամեծ աւազակը, հարստահարիր ողբան կուզես. այդ դու կարող ես անել ժամանակաւոր կերպով, բայց հաստատ համոզված եղիր, որ չես կարող այդ թշուառ ժողովրդի կուրծքը պատառել և սիրտը դուրս քաշել, այն սիրտը, ուր հաստատ բնակութիւն է հաստատել յեղափոխութիւնը...

ՆԱՄԱԿ ԱՔԻԱՅԻՑ

Աքիան, տաճկական Սիբիրը, որ մի ժամանակ Խրայելացոց խոստացած Աւետեաց երկրի մի մաս կը կազմէր, այժմ հայերի համար աքսորատեղի դարձած է: Այստեղի ջուրը կապարի պէս ծանր է և, կարծես, կը քարացնէ մեր խորհելու ու զգալու ընդունակութիւնը: Մեր ականջներու մօտէն և մեր դէմքի վրայէն կը բզզան զզուելի ճանճեր, որոնք իրենց պլասեռ պէսպէսութեամբ տեղոյս մթնոլորդի կենդանի զարդերը կը կազմեն: Հացի և մանաւանդ քաղցրեղէնների վերայ մէկ վարկենի մէջ այնքան ճանճեր կը հաւաքվին, որ պարզապէս չես կրնար իմանալ, թէ այդ ճանճամած մակերևոյթի տակ ինչ բան կը գտնվի: Մոծակները նորածին մորեխի մեծութիւն ունեն և իրենց սուլումն սարսռալի դող կանգնի երակներիս միջէն: Լուերը այնպիսի ահռելի չարանք կը պատճառեն, որպիսին կարծեմ չէ կրած և Գրիգոր Լուսաւորիչը խոր Վիրապի մէջ: — Երևակայիր մարդաձև մի մեքենայ, որ ասեղներից բաղկացած է, և մարդն այդ մեքենայի մէջ դնելով՝ ամեն կողմից կը ծակծկեն մարմնը զարհուրելի քստմնումներով: Ճիշտ այդպէս են լուերի խայթումները: Մեր մարմնի մաշկերը կորուսած են իրենց բնական գոյնը: Քաղաքական յանցաւորները ոչ ուրէք այնչափ ծայրայեղ զրկանքների ենթարկված են, որչափ Աքիայում: Քաղաքական յանցաւորները, որոնք դատարանի առջև աքսորանաց կոչ բերդաքաղաքի մէջ ապրելու դատապարտված են, հակառակ նոյն իսկ իրենց դատական որոշման՝ տաժանակիր աշխատանքի դատապարտվածներէն աւելի վատ վիճակ ունեն. նոքա զօրանոցի մէջ բանտարկված են և կը գտնվին թէ ոստիկանական և թէ զինուորական հսկողութեան ու հրամանի տակ: Թող չեն տար ոչ մէկի հետ տեսնվելու, մինչդեռ տաժանակիր աշխատութեան և ցմահ շղթայակապ դատապարտվողներն այս մասին աւելի շատ ազատութիւններ կը վայելեն:

Շղթայակապներին բանտի մէջ իրաւունք կայ զբաղվելու մը ունենալ, իսկ քաղաքի միջէն եթէ որ և է մէկը հրաման աքսորեալ արհեստաւորի մը աշխատութիւն յանձնել

լինի, թող չի տրվում:

Հայ քաղաքական աքսորելոց ըստ օրինի 20 ֆր. ամսական պիտի տրվի(միւսիրիս), մինչդեռ ոչ մի փարա չը տրվելէն զատ՝ նորեկները երկու երեք ամիս մնալուց յետոյ հազար ու մի խայտառակութիւններից յետոյ հազիւ հազ կարողանում են իրենց օրական 2 ֆունտ հացը կանոնաւորապէս ստանալ: 1892 թ. Մուշէն մօտ 30 աքսորեալներ ղրկվեցան, որոնցից 4-ը շղթայակապ աշխատանքի ենթակայ լինելով՝ բանդ տարվեցան, իսկ միւսները զօրանոցի մէջ բանտարկվեցան և ամբողջ երկու ամիս կառավարութիւնը նոցա օրական հացը չէր տայ, որչափ աղերսում, պաղատում էին: Նոքա դիմեցին պատրիարքին, դիմեցին Մեծ-Եպարքոսին, նելքին գործոց նախարարին. դիմվեցաւ Ռուսիոյ, Անգլիոյ և Ֆրանսայի դեսպաններուն, բայց իզուր. դեսպաններու միջնորդութիւնն աւելի ծանրացուց աքսորելոց վիճակը: Հին բարեկամներուս և առհասարակ ուրիշ հայերու ընթացքին նայելով, անսահման զզուանք զգալու է մարդ հայութեան նկատմամբ, այլ բարեբաղդաբար ունեցած և աստ խացած տեղեկութեանցս համեմատ գաւառներու մէջ հայ բանդարկեալները ամեն տեսակ աջակցութիւն կը վայելեն հայ հասարակութենէն. մինչև իսկ 7-8 տարիներէ ի վեր բանտարկվածները մինչև այսօր թէ դրամով, թէ զգեստով և թէ ամեն բանով ջերմ հոգածութեան առարկայ եղած են հայ հասարակութենց Էրզրումի, Երզնկայի, Կեսարիոյ և Վանի բանտերու մէջ: Բուլղար քաղաքական աքսորեալք մեծ երախտագիտութեամբ կը յիշեն հայաստանցոց իրենց ցոյց տված խնամքն ու հոգածութիւնը:

Ինձ հետ զօրանոցի մէջ բանտարկված են 40 հայեր: Կազարմայի մէջ ենք և մէկ սենեկում: Երեքը վարդապետ են, մէկը 70-ամեայ ծերունի քահանայ մը և մնացեալ 36 հոգին ծեր ու երիտասարդ աշխարհականներ: Մեր մէջ կայ քեռի Ն. անուն 90-ամեայ ծերունի մը, որ դատապարտված է 10-ամեայ բանտարգելութեան: Քեռի Ն.ը Բուլանիի գեղերէն մէկի ռէսն է: Նորա մազերը բոլորովին սև են տակաւին: Ճանապարհին աչքի ցաւ ունենալով՝ թուրք զինուորականք ծխափողի (մուշտուկի) կեղտն իրրև դեղ աչքը լեցնելով՝ բոլորովին կուրացնել տված են, այնպէս որ հիմա ոչինչ չի տեսնի: Ձեռքերու մէջ սաստիկ մեծ ոյժ ունի. ձեռքդ սեղմած ժամանակ կարծես թէ պիտի փշրվի, եթէ քիչ մ'ալ ուժով հուպ տայ: Հարիւրամեայ հասակին պիտի ազատվի, տակաւին չէ կորցրած իր յոյս տուն վերադառնալու: Անունը դրած եմ "յեղափոխական". նախ կը կարծէր, թէ յեղափոխականը ուտելու բան է, իսկ հիմա, երբ լաւ գիտէ յեղափոխութեան ինչ ըլլալը, ինքն իրեն կը կոչէ "յեղափոխականներու ռէյիզ": Բանտարկեալները մեծաւ մասամբ խեղճ են և սընունդնին ցամաք հացն է: Մէկ հոգի կաշառքի միջոցաւ ազատութիւն ստանալով, քաղաքի մէջ ազատ կը պտտի. մինչև իսկ ցմահ շղթայակապ-բանտարկութեան դատապարտվողներն այստեղ կաշառքի շնորհիւ քաղաքի մէջ բաւական ազատ են: Օրէնք ասած բանը չկայ. ով դրամ ունի, ամեն բան կարող է և օրէնքը նրան կը պաշտպանէ, ով չունի, կորսուած է:

ԱՃԻՒՌԻԹԵՆ

Անցնենք Հնչակին:

Հնչակեան խումբը ասպարէզ դուրս եկաւ, իբր սոցիալիստ-յեղափոխական: Նա հենց սկզբից յայտարարեց, որ ինքը չի բաւականանալու միայն ռամկավարական ազգային անկախութեամբ, այլ նրա նպատակն է սոցիալիզմը: Բայց թէ ինչ բան է սոցիալիզմը, ինչպէս կարող է նա իրականանալ, դրա մասին չէր կարելի ոչ մի որոշ գաղափար կազմել Հնչակի տուած յօդուածներից, չէր կարելի, որովհետև հենց ինքը, Հնչակի խմբագրութիւնը, որոշ գաղափար չունէր նրա մասին և չունի մինչև այսօր էլ:

Հայեացքների քաոս, խառնաշփոթութիւն և ինքնուրոյնութեան կատարեալ բացակայութիւն,- ահա թէ ինչ կարելի է նկատել Հնչակի տեսական հայեացքների մէջ: Եւ եթէ Հնչակի խումբը ասպարէզ դուրս եկաւ բոլորովին անպատրաստ, առանց դրական համոզումներ ունենալու, պէտք էր սպասել, որ գոնէ իր 7-ամեայ գոյութեան ընթացքում նա այդ ձեռք կը բերէր: Սակայն այդ չեղաւ, և ներկայումս էլ՝ չնայելով այն փոփոխութիւններին, որոնց ենթարկվել են Հնչակի տեսական համոզումները, նա նոյն քաոսն է ներկայացնում, նոյն անինքնուրոյնութեան կնիքն է կրում, ինչպէս և առաջ:

Հնչակը առաջ իրեն հրատարակեց սոցիալիստ-յեղափոխական. վերջերումս աւելացրել է և երկու ուրիշ կոչումներ. մարքսիստ և սոցիալ-դեմոկրատ: Հենց այդ երկու նոր տերմինները բացատրելու համար Հնչակի խմբագրութիւնը Ֆերդ. Լասսալի "Սահմանադրութեան էութեան մասին" գրքոյկի թարգմանութեան կցել է մի երկար յառաջաբան: Գիրքը նոր է լոյս տեսել, այնպէս որ այդ յառաջաբանը նրա վերջին խօսքը կարելի է համարել, ուստի կանգ առնենք քիչ դրա վերայ: Այդ յառաջաբանը մեր ընթերցողներից շատ շատերը կարդացած չեն լինիլ, և եթէ կարդացած էլ լինեն, հաւատացած ենք, շատ էլ բան հասկացած չեն լինիլ նրա Էնգելսական խրթին նախադասութիւններից. աւելորդ չենք համարում այս պատճառով կրկնել այստեղ նրա մէջ արտայայտած մի քանի մտքերը, որոնք նշանակութիւն ունեն այժմ:

Հասարակական, քաղաքական կազմակերպութեան հիմքը կազմում են երկրի տնտեսական պայմանները: Ուստի, երբ մի երկրի տնտեսական պայմանները փոխվում են, անպայման պէտք է փոխվեն և նրա քաղաքական ձեւերը: Հայութեան մէջ ներկայումս կատարվում է մի այդպիսի պրոցէս: Հայ ժողովրդի տնտեսական պայմանները փոխվում են, նոյն ձևով, ինչ ձևով այդ եղել է Եւրոպայում. մանր սեփականատիրութիւնը քայքայվում է հետզհետէ և տեղի տալիս խոշոր սեփականատիրութեան: Տաճկահայ գիւղացու համար հարկերի պատճառով իր սեփական հողը դառել է "ծանր բեռ, որ չէ տալիս ոչ մի շահ, այլ և մի չարաբաստիկ գործիք, որ ծառայում է միայն շահագործողներին": Նա թողնում է իր հողը, գնում արդիւնաբերական քաղաքները և դառնում վարձկան բանուոր: Նոյն վիճակին են ենթարկվում և արհեստաւորները, որոնք անկարող են լինում մրցել խոշոր գործարանատէրերի հետ: Այսպիսով՝ մեր մէջ պատրաստվում է պրոլետարիատ, բանուոր դասակարգ: Դրա հետ

զուգընթացաբար զարգանում է մի ուրիշ դասակարգ, բուրժուազականը, որը իր ձեռքի տակ ունենալով կապիտալը, երևան կը գայ, իբրև բանւոր դասակարգի մշտական կեղեքիչ.—

«Դա է այն պատմական բնական պրոցէսը, որ սկսել է տեղի ունենալ հայութեան մէջ եւ որի առաջադիմական ընթացքն անխուսափելի է եւ միեւնոյն ժամանակ ինքն էլ պայման հայութեան ընդհանուր յառաջադիմութեան։ Հայութեան մէջ ծագող տնտեսական այդ նոր յարաբերութիւններն իրանց շարունակ զարգացումով ազգին աւելի եւ աւելի կը զատեն երկու մասի, երկու դասակարգի վրա, բուրժուա եւ պրոլէտարիատ, որոնք հէնց այժմ, իրանց կազմութեան ներկայ սկզբնաւորութեան մէջ, ունեն միմեանց հակառակ տնտեսական շահեր, որ՝ գնալով՝ աւելի ու աւելի կորոշվեն եւ վերջը կառնեն արդէն սուր կերպարանք։»

Կանգ առնենք այս վերջին կէտի վրա միառժամանակ։

Ուրեմն այդ պրոցէսն անխուսափելի, ճակատագրական է, ուրեմն կապիտալիզմը պէտք է անպայման մերմէջ մուտք գործի, պէտք է տակնուվրայ անի ներկայ բոլոր կարգերը, մտնեն խաշոր արդիւնագործութեան ձեւեր, հարստութիւնը պէտք է կենտրոնանայ փոքրաթիւ կապիտալիստների ձեռքը, ընդհանրութիւնը անպատճառ իր բոլոր սեփականութիւնից զրկվի, և այս բոլոր ցաւերից յետոյ միայն կարող է իրագործվել սոցիալիզմը։

Այսպէս է, չէ՞...

Սակայն նոյն Հնչակի խմբագրութիւնը աւելի մեծ ապլոմբով պնդում էր մի ժամանակ, թէ հայ ժողովուրդը կարող է խուսափել կապիտալիզմի չարիքներից, որ յանցանք է աշակցել նրա մուտք գործելուն, որ պէտք է դրա առաջն առնել, որ հենց դրա համար է սոցիալիզմը. հարկաւոր է միայն ձեռք բերել ընդարձակ ռամկավարական կառավարութիւն, որը երկրի բոլոր հարստութիւնը կը դարձնի հասարակական, հաւաքական սեփականութիւն և այլն։ Եւ երբ Արմենիայի էջերում պ. Սիւնին յանդգնեց ասելու, թէ անկարելի բան է, թէ մինչև իսկ ձգտումը "արգելել կապիտալիզմի մուտքը" հակասում է նշանաւոր սոցիալիստների տէօրիաներին, ահա թէ ինչ պատասխանեց Հնչակը իր օլիմպիական բարձրութիւնից պ. Սիւնիի հասցէին.

„Մեր կարծիքն այն է, որ եթէ Հայաստանն ամփոփվէ ռամկավարական-հանրապետական պայմաններում, նա իր տնտեսական սովորութիւններով ու առանձնայատկութիւններով կարող կը լինի խուսափել կապիտալիստական բունից կազմակերպութիւնից, միանգամայն օգտվելով դրա հարկաւոր ու առողջ պտուղներից։ Մեր այս միտքը, ինչպէս ասացինք, Ս. Սիւնին կարծում է թէ հակասում է նշանաւոր սոցիալիստների թէօրիաներին։ Տեսնենք, ուրեմն, թէ Կ. Մարքսն, սոցիալիզմի հայրը, ինչ է ասում իր «Նամակում» հրատարակութիւն սոցիալիզմի երկրորդ հոր՝ Ֆրիդրիխ Էնգելսի։ «Ես այն կարծիքն ունեմ,— ասում է Մարքսը,— որ կարելի է իրագործել կապիտալիստական կազմակերպութեան պտուղները, առանց կրելու այն չարչարանքները, որ նրանից անբաժան են եւ զարգանալ սեփական, ինքնուրոյն պատմական պայմանների համեմատ։ Ռուսաստանը, որ այնքան ձգտում է դառնալ կապիտալիստական երկիր՝ Արեւմտեան Եւրոպային նմանելու, նա այդ քայլն անելով կկորցնէ ամենայարմար առիթներից մէկը, որ իրերի պատմական ընթացքը տուել է նրան խուսափելու համար կապիտալիստական կազմակերպութեան ամեն ձախորդութիւններից։ Իսկ Արեւմտեան Եւրոպական կապիտալիզմի ծագման ու ընթացքի իմ նկարագիրն (այսինքն՝ թէ Եւրոպայում կապիտալիզմը կկերպարանափոխվէ ապագայում սոցիալիզմի) դարձնել պատմական-փիլիսոփայական մի ամբողջ թէօրիա եւ ասել թէ ամեն ժողովուրդ ան պատճառ պիտի այդպէս ընթանայ (կապիտալիստական շաւղով դէպի սոցիալիզմ),— ներողութիւն. թէօրիաս այդպիսի բացատրութիւնն ինձ համար միանգամայն թէ չատ պատուաբեր է եւ թէ չափազանց ամօթալի։» Այսպէս, հետեւաբար, ամեն երկրին պարտաւորեցուցիչ չէ սոցիալիստական կազմակերպութեան հասնելու համար կապիտալիզմի շաւղով անցնել։ Կան երկիրներ, որ ունենալով իրենց պատմական ինքնուրոյն պայմանները եւ կամ ամփոփելով նրանց հասարակական նպատակայարմար կերպերում, «կարող կլինեն իրացրնել կապիտալիզմի առողջ պտուղներն, առանց կրելու նրա չարչարանքները», կարող կլինեն օգտվել նրա բարիքներով, առանց զգալու նրա չարիքները, «կարող կլինեն եւ առանց կապիտալիստական շաւղի հասնել սոցիալիստական կազմակերպութեան»։ Այժմ պա՞րզ է ձեզ, ո՞վ գիտուն Սիւնի, որ նոյն իրեն Մարքսի եւ մեր ասածն իրար չեն հակասում։ Ինչո՞ւ համար էք ձեր փայտէ գրչով Կ. Մարքսի մեծ անունը մրոտում։

Իսկ "այժմ պարզ է ձեզ, ո՞վ գիտուն" Հնչակի խմբագրութիւն, որ դուք ձեզ սարսափելի կերպով հակասում էք, որ դուք կրկնում էք նոյնը, ինչ որ Փորթուգալեանի "նոր ձեռք բերած դեւահաս արբանեակներից մէկը, ոմն Ա. Սիւնին" էր ասում. պարզ է՞ նոյնպէս, որ անուանելով ձեզ մարքսիստ, հակասում էք Կ. Մարքսի վերոյիշեալ խօսքերին։ "Ինչո՞ւ համար էք ձեր փայտէ գրչով Կ. Մարքսի մեծ անունը մրոտում"։

(Կը շարունակվի)

Պոլսից մենք ստացանք այս բոպէիս.—

Կիւրակի, ամսոյս 13-ին Գում-Գարուի եկեղեցուց դուրս եկած ատեն Աշղեանի վրա 3 անգամ ատրճանակ պարպած է, սակայն չէ վիրաւորած։ Արձակողը 22-23 տարեկան երիտասարդ է, միջահասակ. ինքը կիպրոսցի է, անգլիահպատակ, անունը Յակոբ։ Մանրամասնութիւնները շուտով։

Նուիրատվութիւնների ցուցակ.—

N. 3ր. Վ.Ջ. 100ր. Փունջ 35ր. N. 10ր. Բ.-ից Վ.-ի և Պ.-ի միջոցով 100ր. Ջադակ 144ր. Սմբ. 370ր. Մլտ. 200ր. Ակկ. 1194ր. Փունջ 19ր. Հայաստան 10ր. Մսկ. 2000ր. Բժ. Ա. 5ր. Անթառ. 13ր. Խաչագող 38ր. Բժ. Х.-ի խմբից 65ր. Իս. 10ր. Հաջի 25ր. Կայծիկ 25ր. Փունջ 19ր. Գրոշմից 38ր. Պղաձոր 100ր. Շէ. նից 110ր. Ագ. 290ր. Զոկի խումբ 78ր. Նշից 30ր.

(Կը շարունակվի)

Մեր խմբագրութիւնից կարելի է ստանալ.

1. Ապստամբական Ոգի.
2. Յեղափոխական Կեանքից.
3. Գաղտնի Տպարան։

Մամուլի տակ է Ֆրիդրիխ Էնգելսի

ԳԻՏՆԱԿԱՆ ՍՕՑԻԱԼԻԶՄ

Դաշնակցութեան անծանօթներից խնդրվում է թղթակցութեան և նուիրատվութեան համար դիմել.

L. Boole, 15, Augustus Rd., Hammersmith, W. London.

Վիեննա. Դաշնակցութեան ազատ տպարան